ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով էլեկտրասարքավորումների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.11.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Դավթյանը
Անդամներ՝	Ա. Գաբրիելյանը Ա. Պողոսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 08.11.2018թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ի և ՌՎ Պրոջեկտս ՍՊ ընկերության՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 08.11.2018թ., թիվ 2 որոշմամբ, համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, ծանուցվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ և ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև Համակարգով սահմանված ժամկետը, ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը /անվանում, ապրանքային նշան, արտադրող, ծագման երկիր, տեխնիկական բնութագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական տեղեկատվություններ /կցվում են/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը՝ ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ և ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ կողմից ներկայացվել են հմակարգով սահմանված ժամկետում /կցվում են/:

Նիստը կասեցվել է և նշված մասնակիցների ներկայացված որակավորման փաստաթղթերը ուսումնասիրվել են հանձնաժողովի կողմից:

Նիստը շարունակվել է 19.11.2018թ.

3. Հանձնաժողովն արձանագրեց.

3.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական տեղեկատվություններ /կցվում են/:

3.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերում /ամբողջական նկարագրերում/ հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ՝ 7,8,45,62,66,71

- 7, 8, 62 չափաբաժիններով նշվել են իրարից տարբերվող բնութագրեր, անհրաժեշտ է հստակեցնել բնութագրերը,

- 45 և 66 չափաբաժիններով նշվել են «համարժեք» բառերը, անհրաժեշտ է նշել հստակ նկարագիր, ապրանքային նշան,

- 71 չափաբաժնով բացակայում է ամբողջական նկարագիրը /անհրաժեշտ է նկարագրել հավաքածուն, կամ կցել նկար, կամ նշել որևիցե ապրանքանշան/: Մեր կողմից Համակրգին կցվել է պահանջվող ապրանքի նկարը:

ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ 6, 44

-6 չափաբաժնով նշվել է իրարից տարբերվող բնութագիր, անհրաժեշտ է հստակեցնել բնութագիրը,

- 44 չափաբաժնով անհրաժեշտ է նշել պահանջվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

4. Հանձնաժողովի որոշումները.

4.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով Կարգի 48 կետով՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով սույն արձանագրության 3.2 կետով նշված մասնակիցներին շտկել արձանագրված անհամապատասխանությունները Համակարգով սահմանված ժամկետում, չշտկելու դեպքում հայտը նշված չափաբաժինների մասով կմերժվի:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

4.2 Ընտրված մասնակիցներ ճանաչել ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ն՝ 1,2,3,4,5,13,15,24,40,41,42,43,48 չափաբաժիններով, ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ՝ 9,10,14,19,20,21,28,61 չափաբաժիններով և հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 26.11.2018-ին

5. Հանձնաժողովն արձանագրեց.

5.1 Համակարգով սահմանված ժամկետում ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ն ՌՎ Պրոջեկտս ՍՊ ընկերությունը ներկայացրել են համապատասխան փաստաթղթեր:

5.2 Հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներ ճանաչել ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ-ն՝ 6,44 չափաբաժիններով, ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ՝ 7,8,45,62,66,71 չափաբաժիններով

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Դավթյանը

Անդամներ՝ _____ Ա. Գաբրիելյանը

_____ Ա. Պողոսյանը

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյանը